ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Վ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

1890-ական թթ. վերջերին արևմտահայ պոեզիան թևակոխեց իր զարգացման նոր փուլը։ Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես նաև արևմտահայության ճակատագրի մեջ կատարված փոփոխությունները պայմանավորեցին այդ նոր շրջանի բովանդակությունն ու զարգացման ուղղությունը։

1895—96 թթ. հայկական կոտորածները և հետագա իրադարձությունները եկան հաստատելու, որ Համիդի կազմակերպած ոճրագործությունը մի քայլ էր՝ խնամքով մտածված և հեռուն գնացող հրեշավոր ծրագրի իրագործման ճանապարհին։ Հայկական կոտորածներն սկսեցին պարբերաբար կրկնվել և առավելագույն չափերի հասան 1915 թ.։

Քաղաքական այդպիսի իրադրության պայմաններում արևմտահայ պոեզիան իսկապես դառնում է ժողովրդական տառապանքի ու ցավի, ընդվզումի և բողոքի տարեգրություն։ Արևմտահայ պոեզիայի զարգացման նոր շրջափուլի սկիզբն ազդարարող ամենանշանակալից երևույթը դարձավ Սիամանթոյի «Դյուցազներեն»-ը։ Իսկ «Հայորդիներ», ապա նաև «Հոգևարքի և հույսի ջահեր» ժողովածուներով մեծ բանաստեղծը կանխատեսում էր պոեզիայի զարգացման ապագա ուղին։ Այդ զարգացումը պիտի ընթանար կյանքի թելադրանքին համապատասխան, պոեզիան պիտի դառնար ժողովրդի հառաչանքի և հույսերի լեզուն, գեղարվեստական մի հուշարձան՝ ողբերգական ու հրաշունչ օրերի սարսափներն ու ողջ հերոսականությունը սերունդներին տանելու համար։ Դարասկզբի առաջին տարիներին արդեն, Սիամանթոյի և Վարուժանի ստեղծագործության շնորհիվ, այս գիծը խորացավ ու բնութագրական դարձավ արևմտահայ պոեզիայի համար։ Քաղաքական-հայրենասիրական պոեզիայի հին տրադիցիաների հիմքի վրա կարճ ժամանակում ստեղծվեցին որոշակիորեն նոր տրադիցիաներ, որոնց հետևորդներից մեկը եղավ Ռուբեն Սևակը։

Սևակի քաղաքական-հայրենասիրական ստեղծագործությունները գրեթե բացառապես գրված են կիլիկյան կոտորածների անմիջական տպավորության տակ։

Հայտնի է, թե Սահմանադրության վերահաստատումն առաջին օրերին ինչպիսի խանդավառություն առաջ բերեց արևմտահայության շրջանում։ Ոգևորության այդ մթնոլորտում նոր կոտորածների բոթը պայթեց հսկայական ռումբի ուժով։ Հանկարծահաս հարվածից մարդկանց մտքերը կարկամեցին մի պահ՝ չկարողանալով ըմբռնել կատարվածի բովանդակ իմաստը։ Սեփական անմեղության, միաժամանակ չարիքին դիմադրավելու անզորության գիտակցությունը զայրույթի էր վերածվում ամեն մի հայրենասեր հայի սրտում։

Բնական է, որ բանաստեղծը առավել ցավագին պիտի ապրեր համազգային աղետի պատճառած վիշտը։ Վարուժանի ահեղ ողբը՝ «Կիլիկյան մոխիրներուն վրա», Սիամանթոյի «Կարմիր լուրեր»-ը արդեն բացահայտում էին

«ցավահեծ հոգու» անհուն կսկիծներ։ Այդ կսկիծներից անմասն չմնաց նաև Սևակը։

Հայրենիքից հեռու, Այպերի ստորոտներին կրկնակի ծանր ողբերգություն է ապրում նա։ 1909 թ. մայիսին Լոզանից ուղարկված նրա մի նամակում կարդում ենք. «Երեկ խմբագրատան մը առջև խռնված բազմություն մը դեպի հոն հրավիրեց քայլերս։ Լուսատիպ նոր հասած նկարներ էին. հազարավոր թշվառներ ծովի ափին, անկողիններ եկեղեցիներու մեջ, ոտքեր, մարդու կտորներ, որովայներ պատռված և դուրս հանված երեխա մը իր մորը դիակին վրա, Միջերկրական ծովը դիակներով հարուստ, գետինները պառկած ծերունիներ, որբուհիներ, թշվառներ... Հայե՜ր, հայե՜ր, հայե՜ր...։ Սիրտս պատառ-պատառ՝ այդ հետաքրքիր բազմության մեջ թշվառ ցեղի մը միակ ներկայացուցիչը բլլալուս՝ կհեռանայի այդ արյունի զայրացուցիչ ցուցադրութենեն, երբ փոքրիկ խոսակցություն մը կեցուց զիս։ Երկու աղջիկներ էին, յոթ և ութ տարեկան։

— Ը՞նչ են այդ պատկերները,— հարցուց փոքրը մեծին։

— Հայերը կջարդեն...

— Ինչո՞ւ»[1]։

Օտար բազմության անտարբեր հետաքրքրությունից խոցված բանաստեղծի ականջին մանկական անմեղ ու բնական հարցը հնչում է ամպրոպի ուժգնությամբ։ Դա այն առաջին հարցն էր, որ անխուսափելիորեն պիտի ծառանար ժողովրդի բախտով ապրող ամեն մի հայրենասերի առջև։ Ինչո՞ւ էր, իսկապես, այդքան արյունոտ հայի ճակատագիրը, ո՞վ էր մեղավոր այն վիթխարի սպանդի համար, որին քաղաքակիրթ աշխարհը նայում էր քար անտարբերությամբ։ «Շվարած, քարացած, ապշած մտածելի այդ մեծ ինչուն,— ներքին դառնությամբ ու վրդովմունքով շարունակում է Սևակը,— այդ կարմիր ինչուն, որ յոթ տարեկան անգետ աղջնակի մը հոգիեն կպոռթկար։ Հեղափոխական այդ հսկա ինչուն իր բերանեն կժայթքեր այնքան բնական, որքան վճիտ ջուրը իր ակեն»[2]։

Սևակի վրդովմունքն, իհարկե, անիմաստ չէր, ոչ էլ անհասցե։ Նրա գրսպված բողոքը։ Նա ըստ էության առաջ է քաշում արմատական մի հարց, որ ինչպես միշտ, հայ ժողովրդի պատմության մեջ այնքան հաճախադեպ օրհասական պահերին, այնպես էլ այդ օրերին հրամայաբար լուծում էր պահանջում։ Արհավիրքին դիմադարձ կանգնելու անհրաժեշտության թելադրանքն էր դա։ Այնուամենայնիվ բանաստեղծը ստիպված է արձանագրելու դառն ճշմարտություն. «Քանիներ մեր մեջ, բոլոր «տարեց»-ները, «շնորհքով» մարդերը, ազգին «խելոք»-ները, տակավին չեն մտածած այդ նախնական հարցումին վրա, որ մանկական ուղեղը կտանջեն։ Ա՜խ, որովհետև այդ ինչուն հսկա անկյունաքարն է հեղափոխության, և որովհետև այդ բառի տակեն կրնան անհաճո բաներ դուրս գալ իրենց շահուն համար, ինչպես կարիճներ՝ քարի մը տակեն»[3]։

Այսպիսով, Սևակը հենց սկզբից ժողովրդի ընդհանուր դանդվածից առանձնանում է հասարակական մի խավ, որ թեև հավակնություն ուներ ազգի բախտը տնօրինելու, իրականում, սակայն, անտարբեր էր վերջինիս տառա-

1 «Ազդակ», 1909, № 23։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

պանքների հանդեպ։ Հասարակական խնդիրներում այսպիսի զգաստ դիրքորոշումը գաղափարական որոշակի ուղղվածություն է հաղորդում Սևակի ազգային-քաղաքական ստեղծագործություններին։

«Ջարդի խենթը» պոեմի հերոսը քահանա հոր կողմից տնից արտաքսված անօթևան մի թափառական է, որին «խենթ» է հռչակում միջավայրը։ Փոխաբերական պատկերում քահանան ներկայացնում է ոչ միայն ռեակցիոն հոգևորականությունը, այլև ընդհանրապես ստրկամիտ այն միջավայրը, որի նշանաբանը հնազանդության կործանարար քարոզն է եղել միշտ։ Ավելի պերճախոս մի այլաբանություն է պոեմն սկսող պատկերը։ Խենթը հոր արյունաշաղախ դիակն ուսին քայլում է «ջարդվածներու դաշտին վրա»։ Զառամ քահանայի դիակը խորհրդանշում է ազատատենչ հոգիների վրա ծանրացած համակերպության դարավոր հորդորը։ Հատկանշական է, որ Խենթը տարօրինակ բեռան ծանրությունից ազատվում է միայն պոեմի վերջին տեսարաններում, երբ հեղինակը ուղղակիորեն հռչակում է ակտիվ դիմադրության ու բացահայտ պայքարի իր հավատամքը։

Խենթի խելագար քրքիջը, որ ուղեկցում է պոեմի ընթացքին՝ սկզբից մինչև վերջ, դառն մի հեգնանք է՝ ուղղված «այս ապուշ կյանքին խելոքներու» հասցեին։ Դրանք հենց այն «շնորհքով մարդերն» ու «ազգին խելոքներն» են, որոնց դեմ ուղղված էր Սևակի արդար վրդովմունքը։ Դամոկլյան սրի մըշտական սարսափի տակ «շտեմարաններին գոհ ուռցնող» ծանծաղամիտ սոփեստների վրա է ընկնում առաջին հերթին համաժողովրդական աղետի պատասխանատվությունը.

Բոլոր խելացի մարդիկներն ահա՜.
Ահա՜ խելոքներն այս ապուշ կյանքին,
Ահա անոնք, որ իրենց ծանր հոգին
Համրիչ հաշելով կ'գրոսցրնեին,
Ու նվիրումով մը աստվածային՝
Կիրակին անգամ մը բեռանով ծոմ
Տիրամոր առջև կրսպառեին մոմ,
Շարաթ մը ամբողջ, անվախ. անհամա՜ր,
Շնալու, սալու, գողնալու համար։

Պարոնյանի, Զոհրապի, Օտյանի ռեալիստական ստեղծագործությունները հիշեցնող այս պատկերը վերջնականապես պարզում է հեղինակի գաղափարական ելակետը։ Սևակն իրավացիորեն չարիքի արմատները փնտրում է սոցիալական կառուցվածքի մեջ՝ ազգային-քաղաքական հարցը դիտելով սոցիալ-դասակարգային տեսանկյունից։ Ազգային ու սոցիալական հարցերի այս անխզելի միասնությունն իրրև բնորոշ գիծ դրսևորվում է նրա հայրենասիրական ստեղծագործությունների ամբողջ շարքի մեջ։ Սևակը հետևողականորեն զարգացնում է այդ գիծը։ Դա երևում է նաև հեղինակի իսկ խոստովանությունից, երբ նա փորձում է բնութագրել իր «Կարմիր գրքի» գլխավոր միտումը։ «Ամիս մը Կիլիկիա» հատորի հրատարակության առթիվ Արշակունի Թեոդիկին ուղղված մի նամակում բանաստեղծը գրում է. «Առանց շաղակրատ հառաչանքի, առանց փքուռուց երեմիականներու, առանց բանաստեղծության այդ գիրքը սրտիս մխվեցավ տեգի պես։ Ցավին գիրքն է այդ, ավելի ճիշտ՝ Զայրույթին գիրքը։ Ու ես մխիթարվեցա հոն գտնելով այն էական միտքը, զոր ջանացեր էի դնել «Կարմիր գիրք»-իս մեջ։ Այո, Հուրգելի հեղինակուհի, հացը աշխատո-

դինը չէ, հացը գողացողինն է. ու մեռնողի իրավունքը մեռցնողեն հարցնելը եղերական անմտություն մրն է»[1]։

Սեակն ստեղծագործության նյութ դարձնելով մայր ժողովրդի արյունոտ ճակատագրի թեման, մոռացության չէր տալիս սոցիալական այն բարդ հարցերը, որոնք ընդհանրապես նրա ստեղծագործության առանցքն են կազմում. նա միայն պատմական թարմ իրադարձությունների լույսի տակ էր դիտում այդ հարցերը՝ միշտ աչքի առաջ ունենալով հայ ժողովրդին հասած արհավիրքի ամբողջ ողբերգականությունը։ Պատահական չէ, որ «Կարմիր գիրք» ընդհանուր խորագրի տակ են զետեղված բնույթով տարբեր այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են մի կողմից «Ջարդի խենթը» և «Թրքուհին», մյուս կողմից «Մարդերգություն» պոեմները։ Հեղինակն, անշուշտ, նկատի է ունեցել այդ գործերի բովանդակության ներքին ընդհանրությունները։

Սեակի համոզմամբ հասարակության ներքին կառուցվածքի աններդաշնակությունը չարիքի աղբյուր է եղել հայ ժողովրդի բազմադարյան պատմության բոլոր էտապներում։ Դարեր շարունակ կույր հավատի և քրիստոնեական հեզության շղթաները կաշկանդել են ժողովրդի ակտիվ պայքարի ուժերը, իսկ դա միշտ էլ ձեռնտու է եղել հասարակության պորտաբույծ խավերին։ Սեակն այս միտքը, այլաբանական պատկերների միջոցով, զարգացնում է «Հայ զատիկ» լեգենդում։

Լեգենդի հիմքում ընկած է Արտավազդ արքայորդու մասին հայտնի ավանդությունը, որ հեղինակը մեկնաբանել է յուրովի. Արտավազդի շղթաները դարձել են դարավոր բռնության խորհրդանշան, իսկ ինքը՝ հերոսը, ժողովրդի բանտարկված հույսը։ Հետևելով իր նախասիրած ձևին, Սեակը ժողովուրդ հավաքական հասկացությունը սիմվոլացրել է ալեհեր ծերունու կերպարի մեջ։ Անհիշելի ժամանակներից ի վեր ծանր մուրճով հարվածել է նա սալին, հոգնել է, բայց «տոկացել է դարերուն»։ Ու «գեղջուկներ բարի, խեղճուկներ բոլոր» անհուն երկյուղածությամբ ունկնդրել են մուրճի ձայնին, որպես «ավետաբեր զանգի»։ «Սարի անեծքն է»,— եղել է նրանց միամիտ հավատը, և անմոռուչ տոկացել են հոգևոր բռնությանը։ Լեգենդական արքայորդուն տրված «հայահեծ» մակդիրը խոր իմաստ ունի. կարծես ճակատագրի դառն հեգնանքով ժողովուրդն ինքն է դարերով ամրացնում կաշկանդված ազատության շղթաները...

Նախադրած հարցի պատասխանը, սակայն, սրանով չի սպառվում։ Սեակն ստեղծում է կոտորածի ու մահվան, արյան ու մղձավանջի սարսռեցնող պատկերներ, որոնք հուշում են իրական ճշմարտությունը։ Հայ ժողովուրդը դիվանագիտական խաղերի զոհն էր այն պետությունների, որոնց շահերը խաչաձևվում էին հետամնաց ու բարբարոսական Թուրքիայում։ Վերջինս ստանձնել էր դահճի դերը և, օգտվելով քաղաքակիրթ կոչված աշխարհի անտարբերությունից, իր դարավոր հաշիվները էր մաքրում անզեն ու անպաշտպան մի ժողովրդի հետ։ Սեակի զայրույթն ուղղված է ոչ միայն նրա, այլև «մեղնով հափրացած շան ոհմակներու» եվրոպական տերերի դեմ.

ՍԵՆՔ՝ հին ուխտերու նոր ուխտագնաց,
ՍԵՆՔ՝ Սուսերը բիրտ ու Դիրքն օրինաց.
ՄԵՆՔ՝ Ցասման ջրվեժը սարի կողեն.
ՄԵՆՔ՝ աղջամուղջի ծնունդ լուսեղեն...

---

1 «Ամենուն տարեցույցը», 1911, էջ 218։

Ձեզի, որ քերված մեր մորթերեն ծիզ
Հարսնիքի Մեղքի վրաններ կառուցիք...
Ու Ձեզ՝ Եվրոպյան դիք, որ չնազին
Սակարկեցիք մեր արյան լույսին գին...

Որքա՜ն դիպուկ է ասված. խսկապես, նրանք իրենց ստոր նպատակների համար սակարկության դրեցին մի ամբողջ ժողովրդի անմեղ արյունը։ Ո՞վ չահեց դրանից։ Առաջին հերթին, իհարկե, Թուրքիան, որովհետև հնարավորություն ունեցավ վերջապես լուծելու տարիներից ի վեր իր դազանային մոլուցքը գրգռող հարցը։ Եվ իրավունք ուներ դահճապետ Թալեաթը հետագայում պարծենալու, թե ինքը երեք ամսում այնքան բան արեց, որքան չէր կարողացել անել Սուլթան Համիդը իր գահակալության երեսուն տարիների ընթացքում...

Արդարացված է, ուրեմն, Ջարդի խենթի, որ նույնն է թե հեղինակի, ահռելի բողոքը՝ ուղղված ամենքի ու ամեն ինչի դեմ։ Եղեռնը կատարված էր և դրա համար հավասարապես մեղավոր էին ինչպես թուրք մոլեռանդ խուժանը, այնպես էլ համբերություն քարոզող հայ «իմաստունները», ինչպես բարեկամի դիմակ հագած Եվրոպան, այնպես էլ ողջ մարդկությունն ու աստված։ Վրեժ ու միայն վրեժ է տենչում խենթը։ Եվ նրա համոզմամբ գալու է վրիժառության օրը։ Խենթի երևակայության մեջ հնչում է գալիք սերունդների առնական երգը.

Ահա մենք կու գանք, ահեղակորով
Մեր հույսին կռանիք ռարշաարներով
Խոսեցրնելու անանո՛ւն կորած
Դերեզմանոցներն համայնատարած...
Ահա մենք կու գանք, ու մենք նզովքն ենք,
Ու խավարին մեջ մխված տեգը ննեզ.
Վրեժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարսափահար ու սարսափելի...

Ցավի, գթության, անեծքի տեսարանները հաջորդում են միմյանց։ Ստեղծվում է մի տեսալ, խռովքոտ ու գերգրգռված վիճակ։ Մտքի, զգացմունքի և առհասարակ հոգեկան գործունեության բոլոր օղակների գերագույն լարվածությունը, որ բխում է անմիջական տպավորությունների ցնցող ուժգնությունից, բանաստեղծի մոտ երբեմն երևան է բերում ներքին ուժասպառություն։ Այդպիսի դեպքերում Սևակի երգը հնչում է թախծոտ ու տրտում մեղեդիներով։ «Ո՞վ իմ հայրենիքս» գեղեցիկ բանաստեղծության մեջ ալպիական բնաշխարհի տեսարանները արտասվալի խոհեր են ծնում «հայրենահալած քերթողի» հոգում։ «Երազ ափերն ու լազվարթ ալիքները» այլևս նախկին հրապույրը չունեն նրա համար, որովհետև օտար են նրանք և չեն հասկանում իր վշտի լեզուն։ Բանաստեղծին մնում է միայն քայլել մոլորուն՝ ակամա ժպտալով օտարի երեսին՝ սրտի վերքերը ծածկելու համար, մնում է թափառել սառը երկինքների տակ, անհաղորդ օտար գեղեցկություններին.

Քալե՞: Մինչև ե՞րբ... Քալե կուրորեն.
Քալե մինչև որ արեն հրակեզ
Իր մարը մտնե նորեն ու նորեն՝
Ու օ՛ր մը այլե՛ւս չի ծագի քեզ...
Բարե՞...: Կյա՞նքն է այս...: Քալե՛ կուրորեն...

Լավագույն կյանքի հեռանկարը կորցրած բանաստեղծն այլևս անկարող է սփոփիչ երգով հավատ ներշնչել լքված հոգիներին («Ինչպես երբեմն»)։ Նա

գիտակցում է իր պարտքը ժողովրդի հանդեպ, զգում է իր վրա հառած հույսով լի հազարավոր հայացքներ, որոնք «թափառական թրուպատուրի վայրագ, վեսս» երգ են պահանջում իրենից, բայց՝

Քերթողը. ծնե՞ր. չը խոսեցավ։ Ան կուլա՞ր...

Վհատության այս պահերին բանաստեղծի դեմ հաճախ է հառնում հնավանդ հայրենիքի կերպարը։ Հայաստանը դառնում է նրա բոլոր մտորումների աղբյուրը, ուրախությունների ու վշտերի հանգրվանը։ Թրեթև իր ամբողջ ստեղծագործական կյանքն ապրելով հայրենիքից հեռու, Սևակը միշտ էլ հոգու բոլոր թելերով կապված է եղել նրա հետ։ Թափառել է նա Լեմանի ափերին, բայց հոգին միշտ ծփացել է Վանա ծովի կարոտով, նայել է Ալպերի ձյունապատ գագաթներին, բայց տեսել է ալեհեր Մասիսը, ապրել է բովանդակ մարդկության տառապանքով, բայց ամենից շատ ու ամենից առաջ նրան հուզել է մայր ժողովրդի ճակատագիրը։ Նրա լավագույն բանաստեղծությունները արյունոտ օրերի գեղարվեստական ճշմարտացի տարեգրության արժեք ունեն։ Ահա «Հայաստան»-ը, գեղարվեստական կատարելության հասցված մի բանաստեղծություն, որտեղ ընդամենը վեց տողով հեղինակն ստեղծում է մի ամբողջ ողբերգական իրականության պատկերը.

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.
— Քո՛յր, ղարիպն է, բա՛ց...
Կմա՞խք մը կանցնի դուռսեն լալագին.
— Սովն է, դուռը բա՛ց...
Տապա՞րն է ջախջախ դռանըս կուրծքին.
— Ջարդն է, դուռը բա՛ց...

Ջերմ տողեր է գրել Ավ. Իսահակյանն այս բանաստեղծության մասին. «Այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանավոր,— կարդում ենք Չոպանյանին ուղղված նրա մի նամակում,— որ 1913 թ. Լոզանում մեր եղերաբախտ բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրյան-Սևակը գրեց իմ ծոցատետրիս մեջ...։ Պարտք եմ համարում տպագրության հանձնելու, մի գուցե չկորի այս գեղեցիկ բանաստեղծությունը»[5]։

Իսկապես, բանաստեղծական այս պատկերը զարմանալի շարժուն է. այն ներկայացնում է ոչ միայն առօրյան, այլև պատմությունը մի ժողովրդի, որ օրորոցից ճաշակել է պանդխտության դառնությունը, սովի թշվառությունը և, վերջապես, ջարդի սարսափը։ Այսպես է եղել դարեր շարունակ։ Եվ եթե մենավոր բարդին ու հեռվում սպիտակին տվող Մասիսը վաղուց ի վեր դարձել են հայկական բնանկարի անբաժանելի տարրերը, ապա պանդխտությունը, սովն ու կոտորածը հայկական կյանքի խորհրդանշանի արժեք են ստացել...

Սևակի ազգային-քաղաքական բանաստեղծությունները, ներքին տառապանքի ու վշտի արտահայտություն լինելով հանդերձ, միաժամանակ առաջադրում են առողջ ու հրատապ գաղափարական սկզբունքներ։ Նա ցավում է մարդկության համար, կազանակերպ դարձած մարդու համար, ցավում է մեռած ստոր համար, որի դիակի գարշահոտությունով ապականվել է «Միրկաթիններու երազն անհատակ»։ Մարդկության լավագույն բախտի երազով

5 ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ։

ապրող բանաստեղծը սրտի խոր ցավով ընդգծում է այն ճշմարտությունը, որ եթե «ապրիլ կուզե գառը նորածին, պետք է իր ակռան սրե լռելյայն», որովհետև

...Կիջնա ան, որ կը ծնկե ահով
Չի բուրն ավելի արուր է խաչէն,
Չի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,
Անոնց, որ կայրին ուրիշի մահով...
(«Զանգակնե՜ր, զանգակնե՜ր...»)

«Աղոթքի փոշով» պարուրված զանգակները, որ կարկամել էին արյունի ու մահվան ահավոր խրախճանի դիմաց, դառնում են ժողովրդի դարավոր ցավի և ըմբոստացման խորհրդանշանը.

Հոգիիս հազար խուլ զանգակներով
Դռռացեք, զանգեր, ու կատաղորեն
Դահավիժեցեք ձեր երկար բառեն,
Ուրկե միայն լալ գիտցաք դարերով...

Ակտիվ դիմադրության անհրաժեշտության ընդունումը մայր գաղափար է դառնում Սևակի ազգային-քաղաքական ստեղծագործությունների համար։ Այնտեղ, ուր սուրն է վճռում հարցը, հնազանդության ու հանդուրժողականության քարոզը հող կարող է լինել միայն չարիքի համար — այս համոզմունքը բանաստեղծին մղում է դեպի ըմբոստացման ու վրեժի ուղղակի կոչը։ Այդ նույն խնդիրն է դնում Սևակը նաև հայ մամուլի առջև. «...Հայ ընդհանուր մամուլը,— գրում է նա դժգոհելով սոլսահայ մամուլի և մտավորականության պասիվությունից,— սուգին սևովը պիտի պատվեր կամ արյունի կարմիրովը պոռթկար և կամ,—եթե չէր կրնար ամեն բան ըսել,—լռեր... գոնե սա հուսահատեցուցիչ, ծայրահեղորեն հոռետես, ցլատ, տրտում դամբանականները չգրեին։ Անոնք, որ մեռան գիտակցորեն, դյուցազնորեն, անոնք ո՛չ արցունքի պետք ունին, ո՛չ վարձու կեղծ լալկաններու, ո՛չ խրատի»[6]։

Սևակի պահանջը ոչ թե օրվա տիրող մտայնության հետևանք էր միայն, այլ ուներ նաև սկզբունքային նշանակություն։ Կյանքի մեջ գրականության ունեցած դերի, նրա բովանդակության ու գաղափարական ուղղվածության հարցն էր դնում Սևակը։ Նման մտահոգություններ ունեին նաև արևմտահայ մյուս հեղինակները, և դա բխում էր գրականության զարգացման տվյալ փուլի առաջնահերթ պահանջներից։ Պատահական չէ, որ գրականության զարգացման ուղղությունների և ընդհանրապես նրա ապագայի հարցերը ամենալայն քննության առարկա են դառնում հատկապես այդ օրերին։ Փոխվել էին ժամանակները, շատ բան էր փոխվել ժողովրդի բուն իսկ ճակատագրի մեջ, առաջ էին եկել գեղարվեստականության նոր չափանիշներ։ Գրականությունը, եթե ուզում էր համրնթաց գնալ կյանքի հետ, պիտի հաշվի առներ այս ամենը։ Անհրաժեշտ էր նոր խոսք ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, այլև մտավոր մշակույթի բոլոր բնագավառներում։ Այս իմաստով պիտի հասկանալ նաև Սևակի այն պահանջը, թե «մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք։ Մեզի կարմիր ու մսոտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականություն մը պետք է։ Մեզի առողջ ու երիտասարդ մտավորականներ պետք են»[7]։

---

6 «Ազդակ», 1909, № 23։

7 Ռ. Սևակ, Բժիշկին գիրքեն փրցված էջեր և քերթվածներ, Փարիզ, 1946, էջ 129—130։

Այն կրքոտությունը, որ հանդես է բերում Սեակը նման հարցադրումների ժամանակ, քմահաճ ու անտեղի չէ, այլ բխում է իրերի կոնկրետ վիճակից։ Նորի առաջադրումը միշտ էլ ինչ-որ չափով ենթադրում է նաև ժխտումը այն հնի, որն այլևս չի կարող բավարարել ժամանակակից պահանջները։ Կյանքի առաջադրած հրամայական խնդիրների բարձրությունից Սեակը քննադատում է իսկական դրականության զարգացումն արգելակող քարացած նորմաները. «Գառնուկի պես անդեն ցեղ մը ամեն օր, ամեն ժամ կհոշոտվի։ Իսկ մեր դամբրոները խելոքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթվեր են, տիեզերական եղբայրության խոսքեր կրնեն մեզի ու կերադեն այն հեռավոր օրվան, ուր գայլ ու գառնուկ մեկտեղ կարածվին... Որբուկի պես անտեր ցեղ մը հուժկու ու լուսեղ ու սրտարուխ բարբարոի մրն է ծարավ։ Իսկ մեր գրագետները հանելուկային, առեղծվածային, խավարակուռ բաներ կրսեն իրեն, ու մեր քերթողները գրիչնին հայ արյան մեջ թաթախելև վերջ չինարեն տաղեր կգրեն, որպեսզի մարդ չհասկնա...»[8]։

Ժողովուրդը մաքառում էր կենաց ու մահի սահմանագծի վրա. ամեն մի հապաղում կարող էր կործանարար լինել։ Այս իրողության խոր գիտակցությամբ Սեակը վճռական բեկման պահանջ է դնում։ «Հեռո՛ւ մենք, ախտագին մտավորականներ,— գրում է նա,— դուք ցեղին ուղեղն եք. բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ, քան հուսահատեցնելով մեր կենսունակությունը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը...»[9]։

Բանաստեղծը վերջնականապես ու հստակորեն ձևակերպում է իր գրական հավատամքը։ «Գրականություն մը տխուր ըլլալու համար պետք չունի անպայման լալկան ըլլալու»[10],— գրում է նա՝ հեռվից հեռու կարծես արձագանքելով մեծ Պարոնյանի հայտնի խոսքերին։

Գեղագիտական այս սկզբունքները Սեակը հաջողությամբ կիրառում է ստեղծագործական պրակտիկայում. նրա կերտած ամենատխուր պատկերների մեջ անգամ զգալի են ոգու արիության զգաստ շեշտեր.

Քե՛զ, ցասումի վայրագ ճեղեր դանավեմ,
Աղջաբության փայփայելի մուր ճրեշ,
Խավարների անհուն ծնունդդդ՝ Վրե՛ժ,
Ողջո՛ւյն. տաղեր՝ դա ինձի...,—

կտրուկ բացականչում է Սեակը, և հավատում ես նրան։ Նա ընթերցողի ներաշխարհն է խուժում մրրիկի պես և ժամանակ չի տալիս խորհելու։ Շիկացած տրամադրությունը վեր է ածվում հրամայական պահանջի։ Մոխրին պետք է տալ «սրտի վերքերն ախտագին», «ամենուն վերքը», նույնիսկ «անսահման վերքը ազգին» ու վառվել միայն «արդարության ծարավով»։ Թող հայրենիքի կուրծքը ակոսեն «փրփրարաշ ու ասպազեն երիվարները», հայրենի արյունոտ դաշտերի վրա թող փոթորկի ազատարար կոիվը։ Բանաստեղծը դառնում է «մութ շանթերու սերմնացան», որ արյունով լի ակոսների մեջ վրեժի երգեր է ցանում։ Եվ նա լիահույս է, որ իր «ցանքեն» անվեհեր առաքյալներ կծնվեն...

---

[8] Նույն տեղում, էջ 128—129։

[9] Նույն տեղում, էջ 129։

[10] Ռ. Սեակ, Երկեր, Երևան, 1955, էջ 241։

Վրիժառու հերոսի կերպարը հաճախ է երևում Սևակի ստեղծագործության մեջ, բոլոր դեպքերում մնալով, սակայն, ռոմանտիկական գաղափարատիպի շրջանակներում։ Այդ հերոսը հեղինակի ձգտումների կրողն է, որ մեծ մասամբ նույնանում է նրա էության հետ, երբեմն էլ դառնում սիմվոլ՝ նման դեպքերի համար հատկանշական բոլոր պայմանականություններով հանդերձ։ Հերոսը բարձրանում է շրջապատից, որոշ իմաստով հակադրվում այդ շրջապատին՝ կրելով բացառիկ անհատի հատկանիշներ։ Կարելի է հիշատակել «Կարմիր գրքում» զետեղված «Թրքուհին», «Ջ:ւն» անավարտ պոեմը, «Ցավո» բանաստեղծությունը։ Վերջինը, մանավանդ, շատ բնորոշ է այդ տեսակետից։

Ցավոն իսկական գաղափարատիպ է, իդեալական մի հերոս, որի մահապատժին նախորդող պահերի դրամատիկ վիճակը դարձել է բանաստեղծության նյութ։ Ավանդական խաչով հերոսին է մոտենում սեվասքեմ քահանան, որի կեղծ հորդորները իբրև անարգանք են հնչում մահապարտի հասցեին։ Մի քանի դիպուկ գծերով Սևակը բացահայտում է վերջինիս ներաշխարհում կատարվող ահավոր բախումները.

> Մարմինը դողաց շղթաներու տակ.
> Պիտի ուզեր լալ. Բրբիջ մ'այլանդակ
> Թոքերու խորեն պոռթկաց շվարուն,
> Երբ խաշը դիպավ կապույտ շրթներուն...

Այս վիճակում Ցավոն դառնում է Խենթի հոգեկիցը, որոշ իմաստով նույն ինքը Խենթը այլ միջավայրում։ Նա դադարում է ապրող անհատականություն լինելուց և հանդես է գալիս իբրև որոշակի գաղափարների կրող։ Տառապանքից է ծնվել նա, միաժամանակ նույն տառապանքն է՝ մարմին առած։ «Ցավո» պայմանական անվանումն իսկ ցույց է տալիս, որ ժողովրդի դարավոր ցավն է լեզու առել հեղինակի գրչի տակ։ Ցավոն հանրության սիմվոլ է և կրում է իր մեջ մաքառող ժողովրդի ըմբոստ ու ցավատանջ հոգեբանությունը։

Բանաստեղծը միաժամանակ իր ժողովրդի պատմական բախտի փիլիսոփան է։ Ի՞նչ է ժողովուրդը, որտեղի՞ց է եկել նա, ո՞ւր է գնում, ո՞րն է եղել նրա գոյության կռվանը դարավոր մաքառումների ճանապարհին, ո՞րն է նրա հարատևման դատնիքը,— ահա խոհեր, որ պաշարում են ամեն մի ստեղծագործողի, մանավանդ արհավիրքի օրերին, երբ ահավոր անողոքությամբ դրրվում է ժողովրդի գոյության կամ չգոյության հարցը։ 1900-ական թթ. այս մտահոգությունը հատուկ էր ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ գրեթե բոլոր ստեղծագործողներին։ «...Ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին։ Եվ ո՞ւր ո-րոնենք էդ ոգին...»,— խորհում էր այդ օրերին Թումանյանը։ «Մի՞թե վերջին պոետն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի»,— տագնապով մտորում էր Տերյանը՝ ողհասական ներկայի և, իր խոսքերով ասած, «խոշոր, գուցե ճակատագրական գալիքի» սահմանագծին։ Այդ նույն մտահոգությունն էր, որ ստիպում էր Վարուժանին պեղելու «ցեղին սիրտը»՝ մայր ժողովրդի գոյության առեղծվածը պարզելու համար...

Այս ամենից բխում է, որ հայ ժողովուրդն իսկապես կանգնած էր պատմական մի փորձության առջև՝ կամ պիտի անհետանար կամ իր դարավոր մշակույթի հիման վրա ստեղծեր նորը և մտներ ժամանակակից զարգացած ազգերի ընտանիքը։ Մայր ժողովրդի բախտով ապրող բանաստեղծը չէր կարող

լությամբ անցնել այս երկրնտրանքի կողքով։ Տերյանն առաջ էր քաշում «հոգևոր Հայաստան» ստեղծելու խնդիրը, Վարուժանը ձգտում էր ոգևորել մարդկանց հեթանոս դարերի մոռացված գեղեցկություններով, հավատ ներշնչել գալիքի հանդեպ, Սևակը շեշտում էր «այլասերման վտանգին մի նոր «վերածնունդ» հակադրելու անհրաժեշտությունը և բացականչում՝ «մեզի նոր Ոսկեդարմը պետք է, նոր Ոսկեդարմը...»[11]։

Վերանալով մի պահ անմխիթար առօրյայից, Սևակը իր շատ գրչակիցների նման ներքին հայացքով դիտում է ժողովրդի պատմական ճանապարհը, փորձելով անցած-գնացած դեպքերի գուգադրությունից բխեցնել պատմության ներքին փիլիսոփայությունը։ Այդպիսի ստեղծագործություններով Սևակը կապվում է դարասկզբին արևմտահայ պոեզիայում լայն տարածում գտած հեթանոսական ուղղության հետ։ Այս դեպքում էլ, սակայն, ամենից առաջ աչքի են զարնում նրա ստեղծագործական խառնվածքի բնորոշ գծերը։ Սևակը ոչ միայն զգացող, այլև խորհող բանաստեղծ է։ Նրա լավագույն ստեղծագործություններն օժտված են փիլիսոփայական հարուստ ենթատեքստով։ Գեղարվեստորեն վերաստեղծված ամեն մի իրողության ներսում Սևակը ձգտում է գտնել այն ընդհանուրը, որով այդ իրողությունը կապվում է պատմության զարգացման օրինաչափությունների հետ։ Այդպիսի դեպքերում դատողությունը գերակշռություն է ստանում ստեղծագործության մեջ ի հաշիվ հույզի և գեղարվեստական պատկերավորության։ Բնորոշ օրինակ կարող են լինել «Առաջին հայերը», «Նահապետը»[12] անտիպ, ինչպես և մի քանի տպագրված գործեր։

Մայր ժողովրդի պատմական բախտին հետամուտ բանաստեղծին այդ ժողովուրդը ներկայանում է առաջին հերթին ստեղծագործ ու կենսահաստատ բնավորությամբ։ Նրա ոգուն խորթ է կյանքի ժխտումը։ Արհավիրքի օրերին ոգմի շեփորն է հնչեցրել նա, բայց չի մոռացել երբեք աշխարհաշեն հորովելը, միշտ՝

Հայր կը ցաներ, կոտոգեր առուն,
Քարավանը հաց կը կրեր հեռուն...

Այսպես է բարձրացել ու հառնել հայի հայրենիքը՝ խաղաղ աշխատանքի երազով։ Ազգային հոգեբանության այս գծերը ամեն մի հայ մարդու արյան մեջ են, կազմում են նրա էության մասը։ Ահա տարագիր հայը, հալածված ու անտուն, քայլում է գլխիկոր «օտար աստղի տակ, օտար երկրին մեջ» («Հայ ծնունդ»)։ Ծնունդ է, ուրախության տոն, բայց ներքնապես լալիս է թափառական ծերունու սիրտը։ Կուտակված ներքին դառնությունը դուրս է հորդում հանկարծ՝ դառնալով ահեղ մի բողոք՝ ուղղված անարդար աստծու դեմ, որ «սնանկ անուրջ», «խարուսիկ իդեալ» է հռչակվում վշտահար ծերունու կողմից։ Ծնունդի անդորր երջանկությամբ ծփացող աշխարհի դեմ, իր վշտին անտարբեր մարդկության դեմ, սակայն, բարի ծերունին չի լցվում չարության թույնով, որ այս դեպքում կարող էր արդարացվել. հոգին դառնացնող ցավը խեղդելով՝ նա մրմնջում է աղոթքի ավանդական խոսքերը.

Խաղաղություն ձեզ, արմա, տեր, տնանկ,
Ձեր բույնին մեջ խունկ, խնձկեղ, կախարդանք...

---

11 Ռ. Սևակ. Բժիշկին գիրքեն փրցված էջեր և քերթվածներ, էջ 130։
12 Տե՛ս ԳԱԹ, Թ. Ագատյանի ֆոնդ։

Հայաստանը բանաստեղծին ներկայանում է անթիվ դարերի ծանրությունն իր ուսերի վրա կրող ալեհեր Նահապետի այլաբանական կերպարով («Նահապետը»)։ Պատմության փոթորիկները միայն կնճիռներ են ավելացրել նրա մռայլ ճակատին, բայց անկարող են եղել ընկճելու նրան։ «Հին, հին դյուդազնի մը նման հսկա», «ինչպես ինկած մի աստված»՝ նա շարունակում է դեռ ապրել ու շնչել։ Ինչո՞ւ։ Ժողովրդի գոյության բուն իսկ հրաշքի մեջ է փնտրում Սևակն այս հարցի պատասխանը։ Բանաստեղծի համոզմամբ ժողովրդի հոգևոր անկախության կովանը բոլոր ժամանակներում եղել է երբեք չմեռնող ազգային ոգին, ապրելու խոր հավատը։ Եվ այստեղ տանջող մտահոգությունը կրկին պաշարում է նրան. արդյոք կենդանի՞ է դեռ այդ ոգին, չի՞ մեռել արդյոք ժողովրդի տոկուն հավատը, արդյոք անհետացման վտանգը չի՞ կախված նրա ճանապարհին։ Պատահական չէ, որ Սևակը ծրագրել էր իր ազգային-քաղաքական ստեղծագործություններն ամփոփել «Վերջին հայերը» ընդհանուր խորագրի տակ։

Սևակը տեսնում էր, թե ինչպես աշխարհով մեկ ցրված հայությունը, երտրրված հայրենի հողից, ճակատագրի հարվածների տակ կորցնում էր իր ազգային հոգեբանության անգնահատելի գծերը։ «Նահապետը» անտիպ բանաստեղծության մեջ այդ իրողությունը ներկայացված է Նահապետի դստեր առեվանգման փաստով։ Վերջինս ժողովրդի հույսերի, ոգու և արժանապատվության սիմվոլն է։

Նրա առևանգումով կտրվում է այն միակ թելը, որ Նահապետին դեռևս կապում էր կյանքի հետ։ Փշրվում է վերջին հույսը՝ բախվելով անողոք իրականությանը, մեռնում է ոգին, օտարանում է հայրենիքը, և ժողովրդի զավակները լքում են իրենց օթևանը, ցրվում են աշխարհով մեկ՝ «փողոցի, բանտի, խաներու մեջ պատն երեսին մեռնելու».

Անոնց ամենուն հետ, ամենուն մեջ
Կը մեռնի դարեր. դարերով անչեջ
Մեր Նահապետը...

Հայ ժողովրդի մարմինը հոշոտող դարավոր վերքն է սա՝ պանդխտությունը, որ տագնապով է լցնում նաև հայրենասեր բանաստեղծի սիրտը՝ մայր ժողովրդի ապագայի հանդեպ։ Հայ պոեզիայի ամենակենսունակ մոտիվներից մեկն, այսպիսով, դառնում է Սևակի բազմալար քնարին հարազատ մեղեդի։

«Վերջին հայերը» շարքի բանաստեղծություններն աչքի են ընկնում նաև ազգային արժանապատվության խոր գիտակցությամբ։ Դրանք անիրավության, ժողովրդի մռայլ ճակատագրի դեմ ուղղված հոգեբուխ պոռթկումներ են՝ երբեմն ծայրահեղ կրքով, բայց միշտ հասկանալի, եթե նկատի ունենանք այդ երգերի ստեղծման կոնկրետ դրդապատճառները։

«Ազդակ» շաբաթաթերթի խմբագրությանն ուղղված մի նամակում Սևակը գրում է. «Այս շաբաթ հելվետյան քաղաքական հանդեսի մը մեջ այս մասին (կիլիկյան կոտորածների—Վ. Կ.) դառն, շատ դառն հեգնություն մը կար— «Աստված էշերը ստեղծեց անարգելու համար, հայերը՝ ջարդելու։ Թուրքիո մեջ ոեժի՞մ պիտի փոխվի — հայերու ջարդ. շերիա՞թ պիտի հաստատվի — հայերու ջարդ. սուլթա՞նը պիտի գահակալի — հայերու ջարդ։ Բայց այս բոլորն այնքան տարօրինակ չէ մեզի համար, որքան այն հուսահատեցուցիչ «խելոքությունը», որով հայերը կ՚ողջունեն այդ ջարդերը։ Ե՞րբ այս ժողովուրդը պիտի

սորվի մարդկայնորեն կատղիլ... Ու իրավ,— ավելացնում է Սևակը,—մարդկայնորեն կատղիլ. այս տարրական առաքինություններ կրվի իսպառ հեռացած բլլալու հայու սրտեն»[13]։

Բանաստեղծը շատ խոր է խոցվել օտար հանդեսի կծու հեղնանքից ու չի կարողանում լռեցնել իր մեջ վիրավորված ազգային արժանապատվության ձայնը։ Իրավացի չեն օտարները. միշտ չէ, որ հայ ժողովուրդն ստիպված է եղել ենթարկվելու բռնակալ սրին. եղել է ժամանակ, երբ «վաշտերն Հոոմի ընկել են մի առ մի նրա դարշապարի տակ», երբ նա «հուժկու կորոտար անզղաղ պատգամը» իր դրացի բարբարոս ազգերին։ Չպետք է մոռանալ, վերջապես, որ հագարամյակներ շարունակ հայ ժողովուրդը տոկացել ու պահպանել է իր գոյությունը շնորհիվ մաքառող ոգու և անսպառ կենսունակության, չէ՞ որ նա՝

Արևմուտքի և Ասիո դարավոր
Ընդհարման վկան է. սոսկ. ահավո՞ր,
Հարյուր ազգերու շիրիմին վկան,
Մեր երկրին վկան ոեռ ոդ, տիրակա՞ն...

Սևակը հպարտանում է իր ժողովրդի պատմությամբ, այն անթիվ հերոսամարտերով, որ մղել է նա ազատության և անկախության իր անվերջ ձրգտումների ճանապարհին։ Բանաստեղծը վերհիշում է փառավոր անցյալի անմոռաց դրվագները՝ կարծես ապացուցելու համար աշխարհին իր ժողովրդի ապրելու իրավունքը։ Եվ կարծես ի պատասխան հոդվածագրի հեղնանքին, Սևակը խոր հավատով ու հպարտությամբ ազդարարում է.

Ու երբ ոեռ երկրի վրա ազատության
Համար մեռնին ափ մը մարոեր չնչին,
Անոնք պիտ բլլան մարդկության վերջին,
Վերջին հայերը...

Այս պայծառ լավատեսությունն է, որ ապրելու իրավունք է տալիս Սևակի ազգային-քաղաքական ստեղծագործություններին։

НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКАЯ ЛИРИКА РУБЕНА СЕВАКА

В. А. КИРАКОСЯН

(Резюме)

В статье подвергаются критическому анализу национально-политические произведения Рубена Севака, являющиеся одной из основных частей его поэзии, определяется место и значение патриотической лирики поэта в едином процессе развития западноармянской поэзии начала XX в., показываются особенности литературно-общественной среды, главные тенденции развития поэзии того времени, обусловившие направление творчества Р. Севака. Особое внимание уделяется оригинальным чертам его политической лирики, тому новому идейно-художественному качеству, которым он, как художник, отличается от своих современников. Подробно анализируется тот факт, что Р. Севак национально-политический вопрос рассматривает в неразрывной связи с социально-классовыми задачами.

13 «Ազդակ», 1909, № 23։